



պատահաբար, որովհետեւ պայմանները տանելի են համարել: Ծնողներս մինչեւ հիմա ապրում են այնտեղ եւ ինձ միշտ պատմում են մեր պատմությունը: Ավելին, ես բնակվել եմ Բուրջ Համուդում, ինչպես ասում են՝ զուտ հայկական թաղամասում, որի պատճառով էլ վաղ մանկությունից, մանավանդ որ նախ սկսուտ, հետո հնչակյան եմ եղել, ընկերներիս հետ միշտ խոսել եմ ազգային հարցերի մասին: Հետո քաղաքական գործունեության մեջ եմ ներգրավվել, մասնակցել եմ հայ երիտասարդական շարժմանը, Բազմաթիվ ցույցերի՝ հանուն 1915 թվականի հայերի, հանուն ապրիլի 24-ի ոգեկոչման:

ՆԱԽԱԳԱՀ - Բեյրութի հայ համայնքը ազգային պատմության նշանակալից իրադարձություններին հաճախ է անդրադառնում:

ՄԻՍԼՅԱՆ - Ամեն ապրիլի 24-ը նշվում է ցույցերով, հանրահավաքներով, եւ այլն, բայց ոչ միայն ցեղասպանությունը հիշատակելու, այլեւ թուրքերի բռնազավթած հողերը պահանջելու համար, որոնք մինչեւ այժմ չեն վերադարձվել: Մենք հենց մեր տարածքներն ազատագրելու համար ենք զենք վերցրել:

ՆԱԽԱԳԱՀ - Մի թե բոլոր հայ երիտասարդները ձեր չափ զբաղվում են ազգային խնդրով: Ուզում եմ ասել՝ այժմ կա՞ն հայ պատանիներ, որոնք անտարբեր են իրենց, ինչպես դուք եք արտահայտվում, «հայկականության» նկատմամբ, որոնք դպրոցում խոսում են այդ մասին, բայց իրենց պարտավորված չեն համարում ինչ-որ բան անել: Կարելի՞ է ենթադրել, որ ամբողջ հայ երիտասարդությունը Լիբանանում եռանդով մարտական գործողություններ է ծավալում:

ՄԻՍԼՅԱՆ - Կարող եմ ասել, որ բոլորը...

ՆԱԽԱԳԱՀ - Այնպիսիները չկա՞ն, որ անտարբեր են մնում, ինչպես ասում են՝ դրանով չեն ապրում:

ՄԻՍԼՅԱՆ - Հայտնի է, որ Լիբանանը իններորդ տարին է, որ պատերազմի մեջ է, ու ինը տարվա ընթացքում նույնիսկ փոքրիկ երեխաները գիտեն, թե ինչ է զենքը եւ այն, որ միակ խնդիրը տարածքային է, քանի որ ինը տարվա ընթացքում մենք զգացել ենք, որ մեր երկրում չենք, դրսևորվելու ազատություն չունենք:



Հաղթանակի նշանը պարզա՞ծ՝ վիրավոր Վազգեն Միսյանը դուրս է գալիս հյուպատոսարանից, 24 սեպտեմբեր 1981 թ., Փարիզ: